ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՇՈՐ ՀԱՄԱՃԱՐԱԿՆԵՐԻ 100-ԱՄՅԱ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ԱՌԱՍՊԵԼ, ԹԵ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հիմնաբառեր. *համավարակ, համաճարակ, թագավարակ, 100-ամյա պարբերականություն, ԱՀԿ, «Սև կարապ»*

Համազասպ ԳԱԼՍՏՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

1989 թ. ավարտել է ԵրԺՏԻ Պլանատնտեսագիտական ֆակուլտետը՝ տնտեսագետ մասնագիտությամբ: 1980-1982 թթ. ծառայել է Խորհրդային զինված ուժերում: 2004 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2004-2019 թթ. դասախոսել է՝ ՀՀ Կառավարման Ակադեմիայում, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում և Տուրիզմի Հայկական Ինստիտուտում:

2019 թվականից ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտող է:

Շուրջ մեկ տասնյակ գիտական հոդվածների և մենագրության հեղինակ է:

COVID-19 (թագավարակ) պայմանական անվանումը ստացած վարակի թեման այս պահին տարբեր ուժգնությամբ, հանրության հոգեվիճակի տարբեր դրսևորումներով և դրանցից բխող տարբեր ընկալումներով զբաղեցրել է մարդկանց մտքերը: Համավարակի այսպիսի զանգվածային ընդգրկման պարագայում մարդկային միտքը, որպես կանոն, փորձում է փնտրել և գտնել որոշակի տրամաբանական կապ երկրագնդի վրա տարբեր ժամանակահատվածներում տեղի ունեցած նմանատիպ իրողությունների առաջացման դրդապատճառների միջև՝ տեսնելով կամ ստեղծելով ինչ-որ գերբնական առնչություններ: Այդ համատեքստում, COVID-19, իր գերարդիականությամբ, չէր կարող շրջանցել թվային ու եզրաբանական մանիպուլյացիաների (ձեռնածությունների) և դավադրության տեսության «սիրահարներին»:

Եվ ահա՛ գույների և պատկերների խտացման այդ մանիպուլացնող տիրույթում երևան է եկել համաճարակների առաջացման 100-ամյա պարբերականության (1720 թ., 1820 թ., 1920 թ., 2020 թ.) վերաբերյալ թեզը: Հոդվածում համաճարակների՝ վերջին 400 տարվա պատմության վերլուծությամբ փորձ է արվել փաստացի տեղեկատվությունը համադրելու նշյալ թեզին՝ հասկանալու համար, թե որքանով է այն հիմնավոր: Ի վերջո, արձանագրվել է, որ միայն վերջին 170 տարվա ընթացքում խոլերայի և գրիպի առնվազն 4 խոշոր բռնկումներ են տեղի ունեցել: Ասել է թե՝ գոնե մեր ժամանակներին նախորդող 400 տարիներին համաճարակների տեսքով մեզ այցելող «Սև կարապները» չունեն 100-ամյա պարբերականություն, ուստի նմանատիպ պնդումներն անհիմն են:

Թագավարակին, դրա հետևանքների հաղթահարմանը, ինչպես նաև հաջորդող իրադարձություններին առնչվող դեռևս ոչ այնքան խորքային վերլուծություններն ու կանխատեսումներն այսօր ընդգծված թեմատիկ ուղղություններ են, որոնց համատեքստում ակտիվանում են նաև համաճարակներին վերաբերող «հանրամատչելի» մեկնություններն ու մտավարժանքները:

COVID-19 (թագավարակ) պայմանական անվանումը ստացած վարակի թեման այս պահին տարբեր ուժգնությամբ, հանրության հոգեվիճակի տարբեր դևևորումներով և դրանից բխող տարբեր ընկալումներով զբաղեցրել է մարդկանց մտքերը: Այս ամենն անմիջականորեն փոխկապակցված է տվյալ վարակի ազդեցության տակ գտնվող երկրի և դրանում տիրող իրավիճակի հետ, ինչն էլ, իր հերթին, հենվում է պետության կարգավորիչ դերի, մասնակցության աստիճանի, կառավարության ու առողջապահության ոլորտի պատրաստվածության, ֆինանսական համակարգի ու սպասարկման օբյեկտների դիրքավորման և մարդկանց վարքագծի վրա:

Ինքնին հասկանալի է, որ գոնե այս պահին ոչ միայն Հայաստանում, այլև Չինաստանում, Իտալիայում, ԱՄՆ-ում մարդկային որակների դրսևորման, վարքագծի ու պետության կողմից իրականացվող միջոցառումների նկատմամբ արձագանքի տարբեր պատկերներ են, և դա ունի իր օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառները:

Սակայն, պարզ է նաև, որ «Սև կարապի»[1] նման զանգվածային այցելության պարագայում մարդկային միտքը, որպես կանոն, ցանկանում է փնտրել և գտնել որոշակի տրամաբանական կապ երկրագնդի վրա տարբեր ժամանակահատվածներում նմանատիպ համավարակների ի հայտ գալու դրդապատճառների միջև՝ տեսնելով կամ ստեղծելով ինչ-որ գերբնական առնչություններ: Այս դիտանկյունից, թերևս, ամենատարածվածը թվերի կամ կրկնվող թվերի պարբերականության սկզբունքով՝ ըստ ինչ-որ ընդհանրությունների կառուցված «տեսություններն» են, որոնք, առաջին հայացքից, կարող են մեծ տպավորություն գործել նմանօրինակ դեպքերի ժամանակագրությանը ոչ այնքան ծանոթ ու ոչ այնքան գիտակ մարդկանց վրա: Այդ առումով, թագավարակն իր գերարդիականությամբ չէր կարող շրջանցել թվային ու եզրաբանական մանիպուլյացիաների և դավադրության տեսության «սիրահարներին»:

Եվ ահա՛ գույների ու պատկերների խտացման այս ոչ այնքան անսպասելի տիրույթում հայտնվում է համաճարակների առաջացման 100-ամյա պարբերականության (1720 թ., 1820 թ., 1920 թ., 2020 թ.) թեզը: Որքանո՞վ է վերջինս տրամաբանական: Ի՞նչ են ակնարկում դրա «կողմնակիցները»՝ մեջբերելով մեկդարյա պարբերականության գաղափարը: Ընդգծված ժամանակահատվածով պարբերականությունն ասես թե վերջին չորս դարերի ընթացքում տեղի ունեցած նմանատիպ դեպքերի՝ թվային տեսքով դասակարգման փորձ է՝ դա դարձնելով մարդկությանը հղված յուրօրինակ «զգուշացում-հաղորդագրություն»:

Նախ՝ եզրաբանության, հետո՝ թվերի մասին:

Համավարակը (պանդեմիա), ըստ էության, համաճարակի զարգացման բարձրագույն փուլն է[2], միաժամանակ, Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) համավարակը մեկնաբանում է որպես համաշխարհային մասշտաբով տարածված նոր հիվանդություն[3], հետևապես՝ այն ի սկզբանե չի կարող ունենալ համեմատման հստակ հիմք: Տեղեկատվական դաշտում համաճարակները հաճախ ներկայացվում են իբրև համավարակներ, համավարակները՝

[1] «Սև կարապի» տեսությունը շրջանառության մեջ է դրել լիբանանյան ծագում ունեցող ամերիկացի տնտեսագետ Նասիմ Նիկոլաս Թալեբը: Տեսությունը վերաբերում է անկանխատեսելի իրադարձություններին, որոնք ի զորու են էական ազդեցություն ունենալ: Талеб. Нассим Николя. «Черный лебедь. Под знаком непредсказуемости». КоЛибри. 2015, стр. 27.

[2] ВОЗ. Что такое пандемия?: https://www.who.int/csr/disease/swineflu/frequently_asked_questions/pandemic/ru/

[3] Նույն տեղում:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Համաճարակների 100-ամյա պարբերականության ցուցանիշները[4]

Հիվանդության անվանումը	*Տարածման վայրը*	*Տարեթիվը*	*Մահվան դեպքերի քանակը*
Բուբոնիկ (Մարսելի) ժանտախտ	Ֆրանսիա	1720 թ.	100 հազ.
Խոլերայի 1-ին համաճարակ	Ասիա	1820 թ.	100 հազ.
Իսպանական գրիպ H1N1	Ամբողջ աշխարհում	1920 թ.	100 մլն
Թագավարակ COVID-19	Ամբողջ աշխարհում	2020 թ.	34 հազ.[5]

համաճարակներ, սակայն եթե ընդունենք ԱՀԿ պարզաբանումը, ապա համավարակի հիմնական տարբերությունը համաճարակից, դրա նոր լինելն է: Սա այն վարակն է, որի նկատմամբ մարդը դեռևս ձեռք չի բերել իմունիտետ:

Մարդկության պատմության ընթացքում Երկիր մոլորակին պատուհասած վարակներն ու մահացու հիվանդություններն[6] իրենց ներազդեցության չափաբաժինն ավելացրել են մարդու տեղաշարժման, հաղորդակցման, արդյունաբերության զարգացման ու ապրանքաշրջանառության ծավալների մեծացմանը զուգահեռ, և հասկանալի է, որ այդ ամենի արդյունքում նոր վարակների կամ հիվանդությունների ի հայտ գալը և ապա համավարակի վերածվելը կարող են դառնալ մարդկության կյանքի անբաժանելի մասնիկը: Այդ առումով, մարդու միտքն արդեն իսկ մշակել և մշակում է նմանատիպ իրավիճակների առաջացման, ապա դրանց հանգուցալուծման սցենարներ և, որպես կանոն, դրանք առավել հանրամատչելի ձևով ներկայացնում գեղարվեստական ստեղծագործություններում, հատկապես՝ կինոնկարներում: Օրինակ՝ հենց այս օրերին չափազանց արդիական է ամերիկյան «Վարակում» ֆիլմը, որը ստեղծվել է 2011 թվականին[7], որտեղ, ի դեպ, վարակի սկզբնաղբյուրն այսօրվա COVID-19-ի նույն «հերոսն» է՝ չղջիկը, իսկ հիմնական վտանգը՝ այդ իրավիճակում հայտնված մարդու վարքագիծը (վախ, մոլեգնություն, իրականության ոչ համարժեք ընկալում և այլն): Այդ առումով, ֆիլմը «մարգարեական է», քանի որ դրա ստեղծումից մոտ 10 տարի անց մենք արդեն իրական կյանքում ականատես ենք լինում մարդու սպառողական վարքագծի նմանատիպ անբացատրելի դրսևորումների այնպիսի զարգացած երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Կանադան, Ֆրանսիան, և այս ամենը խորհելու ու հետևություններ անելու տեղիք է տալիս: Այժմ՝ պարբերականության և թվերի մասին:

Ներկայում, մասնավորապես՝ տեղական և ռուսական կայքերում, հաճախ է հանդիպում համաճարակների կրկնման հարյուրամյա պարբերականության մասին թեզը, ընդ որում՝ նշելով որոշակի տարեթիվ և վարակի կամ հիվանդության անվանում: Այսպիսով՝ մեզ համոզում են, որ վերջին 400 տարվա ընթացքում, 100-ամյա պարբերականությամբ, մարդկությանն «այցելում են» համաճարակներ՝ խլելով միլիոնավոր կյանքեր: Օրինակ՝ այդ պարբերականության գոյությունը շեշտող հայկական կայքերից մեկը նշում է[8], որ 1720 թվականին Բուբոնիկ (Մարսելի) ժանտախտը խլել է 100 հազար մարդու կյանք: Նույնկերպ, 1820 թվականին տեղի ունեցած խոլերայի

[4] Эпидемия каждые 100 лет: https://medjouel.com/ru/une-epidemie-tous-les-100-ans-peste-de-1720-cholera-de-1820-grippe-espagnole-de-1920-coronavirus-de-2020/
[5] COVID-19 CORONAVIRUS PANDEMIC. 30.03.2020. https://www.worldometers.info/coronavirus/
[6] История мировых эпидемий: https://pikabu.ru/story/istoriya_mirovyikh_yepidemiy_chast_1_4686323
[7] Заражение. 2011 г., ОАЭ. США. https://www.kinopoisk.ru/film/501821/
[8] Էպիդեմիա՝ 100 տարին մեկ. https://gpnews.am/epidemia-batsahaytum/

ԱՂՅՈՒՍԱԿ 2

1852-1969 թթ. ընթացքում տեղի ունեցած խոշոր համաճարակները[9]

Հիվանդության անվանումը	*Տարածման վայրը*	*Տարեթիվը*	*Մահվան դեպքերի քանակը*
Խոլերայի 3-րդ համաճարակ	Ռուսաստան	1852-1860 թթ.	1 մլն
Խոլերայի 6-րդ համաճարակ	Եվրոպա, Ասիա, Աֆրիկա	1893-1923 թթ.	800 հազ.
Ասիական գրիպ H2N2	Աբողջ աշխարհում	1957-1958 թթ.	2 մլն
Հոնկոնգյան գրիպ H3N2	Ամբողջ աշխարհում	1968-1969 թթ.	1 մլն

1-ին համաճարակի հետևանքով ասիական երկրներում (Ֆիլիպիններ, Ինդոնեզիա, Թաիլանդ) մահացել է շուրջ 100 հազար մարդ: 1920 թվականին իսպանական գրիպով վարակվել է մոտ 500 միլիոն մարդ, իսկ մահացածների թիվը մոտեցել է 100 միլիոնի սահմանագծին (աղյուսակ 1):

Ներկայացված աղյուսակում առկա է տեղեկություն խոլերայի առաջին համաճարակի մասին: Համաշխարհային վարակների բավական ընդգրկուն պատմությունն ուսումնասիրելիս[10] պարզ է դառնում, որ, ընդհանուր առմամբ, բռնկվել է խոլերայի 7 համաճարակ:

Հետևաբար՝ 1820 թվականից հետո, ժամանակագրական առումով, տեղի են ունեցել խոլերայի ևս 6 խոշոր համաճարակներ: Մասնավորապես՝ 1852-1860 թթ. խոլերայի՝ թվով 3-րդ համաճարակը (Ռուսաստան) խլել է տասն անգամ ավելի շատ՝ շուրջ 1 մլն մարդու կյանք, քան 1820 թվականի առաջին համաճարակը: Մոտ 800 հազ. մարդու կյանք է խլել 1893-1923 թթ. խոլերայի՝ թվով 6-րդ համաճարակը (Եվրոպա, Ասիա, Աֆրիկա): Այս պատկերը վերաբերում է միայն խոլերայի համաճարակին, որի դեպքում արդեն իսկ կտրվում է մարդկությանն «այցելող» վարակների ու հիվանդությունների 100-ամյա պարբերականության առասպելական շղթան: Այժմ անդրադառնանք գրիպի համաճարակներին. այսպես՝ 1957–1958 թթ. Ասիական և 1968-1969 թթ. Հոնկոնգյան համաճարակները աշխարհում խլեցին համապատասխանաբար՝ 2 մլն և 1 մլն մարդու կյանք:

Այսինքն՝ վերջին 170 տարվա ընթացքում խոլերայի և գրիպի առնվազն 4 խոշոր համաճարակներ են եղել: Ասել է թե՝ գոնե մեր ժամանակներին նախորդող 400 տարում համաճարակների տեսքով մեզ այցելող «Սև կարապները» չունեն 100-ամյա թվային պարբերականության տրամաբանություն, և հետևապես՝ կարող ենք հաստատապես արձանագրել, որ մարդկության պատմության այդ «դժնդակ» էջերի վերաբերյալ նմանատիպ պնդումներն անհիմն են: Ըստ էության, համաճարակների պատմության առաջարկված ժամանակահատվածի պարզ վերլուծությունը հիմնովին խառնում է «չարագործ ուժերի» կամ «գաղտնի կազմակերպությունների» կողմից 100-ամյա պարբերականությամբ արհեստականորեն համաճարակներ կազմակերպելու թեզի և, հետևաբար, նման իրավիճակներում դավադրության տեսություններ «մոգոնողների» խաղաքարտերը:

Ինչևէ, ներկա դրությամբ աշխարհը, ըստ ԱՀԿ մեկնաբանման, COVID-19-ի համավարակի փուլում է[11]: Այս վարակն ունի իր յուրահատկությունները և արդեն

[9] Пандемия: https://ru.wikipedia.org/wiki/%D0%9F%D0%B0%D0%BD%D0%B4%D0%B5%D0%B-C%D0%B8%D1%8F

[10] Համաճարակների ցանկ՝ https://hy.wikipedia.org/wiki/ %D5%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B3%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF% D5%B6%D5 %A5%D6%80%D5%AB_%D6%81%D5%A1%D5%B6%D5%AF'

[11] ԱՀԿ–ն կորոնավիրուսը համավարակ՝ պանդեմիա է հայտարարել. https://newsarmenia.am/am/news/in_the_world/AHK-n-coronavirusi-hamavarak-pandemia-e-haytararel-/

իսկ տարածվել է բոլոր մայրցամաքներում, սակայն, միաժամանակ, այն ունի նաև կոնկրետ թիրախային տարիքային խումբ, որն ինչ-որ տեղ հեշտացնում է դրա դեմ պայքարելու արդյունավետ գործիքների կիրառման հնարավորությունը: Այդուհանդերձ, նման դեպքերում մշտապես առկա է նաև մեկ այլ՝ անտեսանելի թիրախային խումբ: Դա հասարակության այն հատվածն է, որն իրավիճակը ոչ համարժեք է ընկալում, վախեցած է և, ըստ այդմ, խուճապ է սերմանում, անմիտ ու անտարբեր ձևանում՝ իր վաքագծի «շնորհիվ» դառնալով վարակի «երդվյալ պահապան» ու տարածմանը նպաստող:

Որպես ճգնաժամային կառավարման ոչ այնքան ցանկալի, սակայն կարևոր և անհրաժեշտ միջոց՝ Հայաստանում 2020 թվականի մարտի 16-ին հայտարարվել է արտակարգ դրություն[12], և այս իրավիճակում, բազում հրատապ և «ֆորսմաժորային» խնդիրների լուծման ուղղությամբ ամենօրյա աշխատանքներին զուգընթաց, չպետք է թերագնահատել նաև այդ անտեսանելի խմբի գոյության փաստը, քանի որ արդեն իսկ ունենք թագավարակի «ճիրաններում» հայտնված զարգացած երկրների դառը փորձը, որտեղ խուճապի ու անտարբերության միակցված գործոնն աղետալի հետևանքների է հանգեցրել ինչպես վարակի տարածման, այնպես էլ հասարակական կյանքի ձևախեղումների առումով:

Հաջողված ճգնաժամային կառավարումը համակարգված, մեկ միասնական փաթեթով իրար փոխշաղկապված և փոխլրացնող կանխարգելիչ միջոցառումների և օպերատիվ որոշումների արդյունավետ իրականացումն է[13], որը նաև պետք է ուղղված լինի հաճախ մարդկային բանականությունից հեռու, սակայն նման իրավիճակներում հաճախ հանդիպող քայլերի կանխարգելմանն ու չեզոքացմանը:

Միաժամանակ, մարդկության պատմությունը ցույց է տալիս, որ նման դեպքերում առողջ տրամաբանությամբ օժտված մարդկային միտքը գործում է առավել արդյունավետ և հետևապես՝ ունակ է հաղթահարելու անգամ ֆորսմաժորային մարտահրավերը և ապա արձանագրվող նոր իրողությունում կենսագործելի դարձնելու նոր մշակված բազում ծրագրեր, զարգացման նոր սցենարներ՝ մարդու ապահով ու որակյալ կյանքի և նրա կողմից կառավարվող տնտեսության յուրաքանչյուր ոլորտի համար:

Առայժմ թագավարակը, համաձայն տեղեկությունների, նահանջել է միայն Չինաստանում և Հարավային Կորեայում, իսկ մնացած երկրներում դեռևս իր «խրախճանքի» փուլում է, որի չեզոքացման հիմնական բեռն իրենց վրա են վերցրել այս «պատերազմի» առաջնագծում կանգնած «անխոնջ զինվորները»՝ բժիշկները: Եվ դա տրամաբանական է ու բնական, քանի որ հենց բժիշկներին է վերապահվել ապրել Հիպոկրատի երդմամբ, որում առկա են հետևյալ տողերը.

«…Երդվում եմ օգնել հիվանդներին՝ խղճիս համաձայն, որքան ներեն ուժերս՝ խուսափելով նրանց որևէ վնաս կամ չարիք պատճառելուց…»:

[12] «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի 298 – Ն որոշում:
[13] Зуб А.Т., Антикризисное управление, изд. АСПЕКТ ПРЕСС, М., 2005, стр. 12.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԱՀԿ-ն կորոնավիրուսը համավարակ՝ պանդեմիա է հայտարարել, https://newsarmenia.am/am/news/in_the_world/АНК-n-coronavirusi-hamavarak-pandemia-e-haytararel-/
2. Էպիդեմիա՝ 100 տարին մեկ, https://gpnews.am/epidemia-batsahaytum/
3. Համաճարակների ցանկ, https://hy.wikipedia.org/wiki/ %D5%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B3%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF% D5%B6%D5 %A5%D6%80%D5%AB_%D6%81%D5%A1%D5%B6%D5%AF
4. «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի 298 – Ն որոշում:
5. Зуб А.Т., Антикризисное управление, изд. АСПЕКТ ПРЕСС, М., 2005, стр. 12,
6. ВОЗ. Что такое пандемия?,https://www.who.int/csr/disease/swineflu/frequently_asked_questions/pandemic/ru/
7. Заражение. 2011 г. ОАЭ. США, https://www.kinopoisk.ru/film/501821/
8. История мировых эпидемий: https://pikabu.ru/story/istoriya_mirovyikh_yepidemiy_chast_1_4686323
9. Пандемия: https://ru.wikipedia.org/wiki/%D0%9F%D0%B0%D0%BD%D0%B4%D0%B5%D0%BC%D0%B8%D1%8F
10. Талеб. Нассим Николя. «Черный лебедь. Под знаком непредсказуемости». КоЛибри, 2015, стр. 27.
11. Эпидемия каждые 100 лет, https://medjouel.com/ru/une-epidemie-tous-les-100-ans-peste-de-1720-cholera-de-1820-grippe-espagnole-de-1920-coronavirus-de-2020/
12. COVID-19 CORONAVIRUS PANDEMIC. 31.03.2020, https://www.worldometers.info/coronavirus/

Амазасп ГАЛСТЯН
Исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ,
кандидат экономических наук

100-ЛЕТНИЙ ЦИКЛ КРУПНЕЙШЫХ МИРОВЫХ ЭПИДЕМИЙ. МИФ ИЛИ РЕАЛЬНОСТЬ?

Тема заражения COVID-19 (коронавирус) в настоящее время с различной интенсивностью, с различными проявлениями психического состояния населения и вытекающими из него с различными восприятиями захватывает умы людей. В таких случаях, человеческий разум, как правило, стремится находить некоторую логику между мотивами таких реальностей, возникающих в разное время на земном шаре, путем наблюдения или создания теории периодического вмешательства сверхъестественных сил. В этом контексте COVID-19, с его суперсовременностью, не мог обойти «любителей» цифровых и терминологических манипуляций и теорий заговора.

И вот, в этой манипулятивной области сгущения цвета и изображения, появляется тезис о 100-летнем цикле возникших крупных эпидемий в мире (1720, 1820, 1920, 2020).

В этой статье, чтобы понять обоснованность тезиса, анализируя эпидемий последних 400 лет, осуществляется попытка сравнить фактическую информацию с этой периодичностью. В результате выявляется, что только за последние 170 лет на планете были 4 большие эпидемии холеры и гриппа.

То есть, по крайней мере, можно констатировать, что за последние 400 лет, эпидемии в форме «Черных лебедей», «посещали» нас не с периодичностью в 100 лет и поэтому мы можем утверждать, что в этих печальных страницах человеческой истории, по этому аспекту искать логику или теорий заговора не следует.

Ключевые слова: *пандемия, эпидемия, коронавирус, 100-летняя периодичность, ВОЗ, «Черный лебедь»*

Hamazasp GALSTYAN
Researcher at AMBERD Research Center, ASUE,
PhD in Economics

100TH ANNIVERSARY OF WORLD'S LARGEST EPIDEMICS. MYTH OR REALITY?

The topic of COVID-19 (coding) infection that has taken hold of people's minds at this moment, with varying intensity, with different manifestations of the public's mental state and with different perceptions. In the wake of such massive scaling of the universe, the human mind, as a rule, seeks to find and find some logic between the motives of such realities occurring at different times on the globe, by seeing or creating supernatural connections. In this context, COVID-19, with its super-modernity, could not bypass the "lovers" of digital and terminological manipulations and conspiracy theories.

And here, in this manipulative domain of color and image condensation, comes the thesis of the 100th anniversary of the emergence of epidemics (1720, 1820, 1920, 2020).

In this article, an analysis of the last 400 years of epidemics has attempted to combine factual information with this thesis to understand the validity of it. As a result, it has been reported that there have been only 4 major epidemics of cholera and influenza in the past 170 years alone. That is to say, for at least 400 years before our times, the Black Swans visiting us in the form of epidemics do not have the logic of 100-year-old digital periodicity, and therefore, in this case, we can affirm that there is no such logic of digital periodicity in these dark pages of human history.

Keywords: *swine fever, epidemic, rash, 100-year period, WHO, «Black Swan»*